Է.

## ՊՌՈՇՅԱՆՆԵՐԸ ԺԳ. ԴԱՐՈՒ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ.

*Պռոշի շինարարությունը յուր ժամանակակից մի ուրիշ մեծ իշխանի՝ Սադուն Աթաբեկի հետ, պետք է մեծ տպավորություն աներ ժամանակակիցների վերա, որ Մխիթար Այրիվանեցին «աշխարհաշէն» մականունը տար նրան։ Տարաբաղդաբար նորա հետ կապված Սրկղունիքի «դարբասի» և յեկեղեցիների մասին ոչինչ ավելի ասել չենք կարող, քան ինչ ասված է. պեղումները, գուցե, կարող եյին մեզ որոշ նորություններ տալ։ Բայց Գեղարդա վիմափորներն իրոք առաջնակարգ յերևույթներ են իրենց ժամանակի համար՝ տեխնիքական դժվարությունների հաղթահարման և գեղարվեստական որոշ հօսանքների հետ ունեցած առնչությամբ։*



Արձ. Թաճերի Թանատի վանքում. Հավ. Ա. 18գ. **Պատկեր 60**

*Պաշտամունքի հետ կապված տաճարների հայրենիքը Հնդկաստանն է. բայց կարիք չունինք այդչափ հեռու գնալու մեր վիմափորների նախագաղափարը մատնանշելու համար։ Առաջավոր Ասիային հատուկ մի յերևույթ էր Հեթիթների ժամանակից, պատերը զարդարած կրոնական պաշտաման հետ կապ ունեցող բարձրաքանդակներով *. Ս. Գիրքն էլ վկայում է, թե Աբրահամ Քետացիներից հատուկ այր է գնում յուր կնոջը Սառային թաղելու համար (Ծննդ. ԻԳ. 3)։ Բազմաթիվ են Փ. Ասիայում և Հայաստանում նախաքրիստոնեական և քրիստոնեական շրջանի արվեստական քարայրները, հաճախ կրոնական պաշտաման համար փորված։ Ամասիայում մենք ինքներս անձամբ տեսել ենք այդպիսիները։* Strzygowski-*ն Փոքր-Ասիային նվիրած յուր աշխատության մեջ նկարագրում է այդպիսի յեկեղեցիներից մի քանիսը, ժայռից կտրած և անջատ շենք կազմած յուր արտաքին փասադներով կամ հենց ժայռերի մեջ, միայն ներսի տարածականությամբ,*

* Хетты и Хетская Культура. Москва. Статья А. Захарова. 60. Культура Востока *շարքի մեջ։*